ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ2.1

«*ՔԱԿ-ԳՀԱՊՁԲ-04/19*» ծածկագրով գնանշման հարցման միջոցով *սննդամթերքի*

գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 0042, Զվարթնոց օ/կ

09 ապրիլի 2019
ժամը 11:00

Մասնակցում էին՝

<u>Հանձնաժողովի նախագահ՝</u>
Դ. Սարուխանյան — ՕՍ և ՕԵԿ վարչության պետի տեղակալ
<u>Հանձնաժողովի անդամներ՝</u>
Ա. Սարգսյան — ԻՎ գլխավոր մասնագետ
Մ. Պողոսյան — ՕՍ և ՕԵԿ վարչության փորձագետ-մասնագետ
Գ. Բաղալյան — ԹԳ վարչության գլխավոր մասնագետ
Հ. Եղիազարյան — ԹՊ վարչության գլխավոր մասնագետ-տեսուչ
<u>Հանձնաժողովի քարտուղար՝</u>
Ա. Խաչատրյան — Ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ

Հայտերի գնահատման մասին

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների մասին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված 2019 թվականի ապրիլի 08-ի եզրակացության համաձայն Յունիոն ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ինչը չի համապատասխանում հրավերի 7.15 կետի և Կարգի 44-րդ կետի պահանջներին:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 44-րդ կետը և հրավերի 7.15 կետը մերժել Յունիոն ՍՊԸ-ի հայտը:

1. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետը, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը և հրավերի 7.20 կետը՝
ա) 1-ին չափաբաժնով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել Գանա Գրուպ Պլյուս ՍՊԸ-ին:

2. Ծանուցել Գանա Գրուպ Պլյուս ՍՊԸ-ին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 12.04.2019թ.) էլեկտրոնային եղանակով ներկայացնել հրավերով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04 թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը

ա) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվեց որոշում կողմ 5, դեմ 0

Դ. Սարուխանյան		**Հանձնաժողովի նախագահ**
Ա. Սարգսյան		**Հանձնաժողովի անդամ**
Մ. Պողոսյան		**Հանձնաժողովի անդամ**
Գ. Բաղալյան		**Հանձնաժողովի անդամ**
Հ. Եղիազարյան		**Հանձնաժողովի անդամ**
Ա. Խաչատրյան		**Հանձնաժողովի քարտուղար**